

**EMBARGOED: Not for news wire transmission,
posting on websites, or any other media use until JUNE
20, 2005, 12 noon CET, Warsaw time**



The World Bank

News Release No. 2005/402/S

Contacts:

Jacek Wojciechowicz (48-22) 520 80 54

jwojciechowicz@worldbank.org

Merrell Tuck, global mobil # 202 415 1775

mtuckprimdahl@worldbank.org

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է՝ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԱՍԻԱՅՈՒՄ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԱՌԱՎԵԼ
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՅՐԱԺԵՇՏ**

*Նոր զեկույցի ներկայացումը համընկնում է հունիսի 21-22-ն անցկացվող
«Պայմանագրերի կիրարկումը» թեմայով սեմինարի հետ*

Վարչավա, 2005թ. հունիսի 20: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի պետությունների մեծ մասում դատական համակարգերի արդյունավետությունը մեծացնելու, կիրարկումը բարելավելու և դատավորների հաշվետվողականության համար կայուն խթաններ ստեղծելու ուղղությամբ դեռ շատ անելիքներ կան: Այս պետությունները պետք է նաև կուտակված դատական գործերի թիվը նվազեցնեն և տարածաշրջանի դատական մարմինների շրջանում կոռուպցիան հաղթահարեն՝ համաձայն Համաշխարհային բանկի նոր զեկույցի:

«Սնցումային տնտեսությունների դատաիրավական համակարգերը՝ գնահատելով անցյալը, նայելով ապագային» վերնագրով զեկույցում ուսումնասիրվում են անցումային պետությունների իրավական հաստատությունները բարեփոխելու ջանքերը սկսած 1990թ.-ից և գնահատվում է այդ հաստատությունների ներկա վիճակը: Հեղինակների եզրակացությունները հիմնված են ողջ տարածաշրջանում անցկացված քաղաքացիների, իրավաբանների և ծեռնարկությունների ղեկավարների հարցման արդյունքների վրա:

«Շուկայական ուղղվածությամբ բազում բարեփոխումների հարցում գրանցված հսկայական առաջընթացը և դատաիրավական բարեփոխումները համաքայլ չեն ընթացել: Իսկապես, դատաիրավական բարեփոխումների և դատաիրավական համակարգի ամրապնդման ուղղությամբ արձանագրված առաջընթացը զիջում է քաղաքականության կամ ինստիտուցիոնալ բարեփոխումների համարյա բոլոր ոլորտներին», ասում է Շերիլ Գրեյը, զեկույցի հեղինակը, Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի Աղքատության հաղթահարման և տնտեսական կառավարման վարչության տնօրենը:

Դատաիրավական բարեփոխումների վերաբերյալ զեկույցի ներկայացումը համընկնում է «Պայմանագրերի կիրարկումը և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի

դատաիրավական համակարգերը» թեմայով հունիսի 21-22-ը անցկացվող սեմինարի հետ, որը կազմակերպվում է Համաշխարհային բանկի և Լեհաստանի Ազգային բանկի կողմից: Միջոցառմանը մասնակցելու են տասնչորս պետությունների և տարածքների պետական պաշտոնյաներ, ինչպես նաև դոնոր կազմակերպություններ՝ դատաիրավական բարեփոխումների և առևտրային պայմանագրերի կիրարկման վերաբերյալ տեղեկությունների և փորձի փոխանակման և հետագա համագործակցության համար հիմք ստեղծելու նպատակով:

«Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի պետությունների անցումային փուլից դուրս գալուն, միջազգային շուկայում մրցակցելուն և ընկերությունների կողմից գործունեության հետ կապված վեճերի լուծումը պաշտոնական իրավական համակարգին վստահելուն զուգահեռ, դատարանների նկատմամբ ճնշումը կավելանա: Սա է պատճառը, որ իրավական հաստատությունների ամրապնդումը հաջորդ տասնամյակի առանցքային խնդիրն է լինելու», նկատում է **Դեյվիդ Բերնշտեյնը**, զեկույցի համահեղինակը, Համաշխարհային բանկում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի պետական հատվածի կառավարման ավագ մասնագետը: Պրոֆ. Բերնշտեյնը, ինչպես Բալկաններում, այնպես էլ Կովկասում կառավարությունների հետ աշխատում է պետական կառավարման և իրավական բարեփոխումների ծրագրերի շրջանակում:

Ընկերությունների և իրավաբանների տեսակետները դատական համակարգի անաչառության և արդյունավետության վերաբերյալ

Ձեկույցի համաձայն, հարցման ենթարկված ղեկավարների միայն մեկ քառորդն է գտնում, որ դատարաններն անաչառ կամ ազնիվ են (այն դեպքում, երբ այնպիսի երկրներում, ինչպես Ալբանիան, Ղրղստանը, Մոլդովան և Ռուսաստանը, հարցվածների ավելի փոքր մասն է նման կարծիք հայտնել): 40 տոկոսից փոքր մասը գտնում է, որ դատարանները կարողանում են կիրարկել իրենց որոշումները: Ղեկավարների մեծ մասը նշել է, որ դատարաններում շատ ժամանակ և միջոցներ են ծախսվում և շատ երկրներում դրանք աճում են: Իրոք, քաղաքացիների կարծիքը դատարանների վերաբերյալ վատացել է 1990թ.-ի կեսից սկսած: Ձեկույցում ներկայացվում են նաև իրավաբանների հարցման արդյունքներից տվյալներ, որն իրականացվել է Բանկի խմբի *«Doing Business»* ծրագրի շրջանակներում: Օրինակ՝ իրավաբանները հայտնել են, որ անցումային պետություններից շատերում չապահովված պարտքի գանձման համար 2004թ.-ին պահանջվել 200 օրից ավելի, իսկ Սերբիայում և Չեռնոգորիայում, Սլովենիայում և Լեհաստանում պահանջվել է շուրջ երեք տարի: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի պետություններում պարտքի գանձման համար պահանջվող միջին ժամկետը, ըստ ամենայնի, շուրջ երկու անգամ գերազանցում է Տնտեսական գործակցության և զարգացման կազմակերպության ավելի բարձր եկամուտ ունեցող պետություններում վերջինիս համար պահանջվող միջին ժամկետին:

Տարբեր երկրներ, դատական իշխանության բարելավման տարբեր առաջարկություններ

«Ընկերությունների կողմից դատարաններից օգտվելու աստիճանի զգալի տարբերություններ ենք արձանագրել և այդ տարբերություններով են պայմանավորված այն բարեփոխումները, որոնց կայուն լինելու հավանականությունն ավելի մեծ է: Ձարմանալի չէ, որ ամուր կապ գոյություն ունի տնտեսական

բարեփոխումների չափի և դատական ծառայությունների նկատմամբ դրա հետևանքով առաջացող պահանջարկի միջև: Սակայն աճող պահանջարկը ընդամենը լրացուցիչ ճնշում է ստեղծում դատարանների վրա, նրանց ընթացքը դանդաղեցնելով և էլ ավելի բացասական ընկալումներ առաջացնելով», պարզաբանում է Ջեյմս Անդերսոնը, զեկուլյցի համահեղինակը, Համաշխարհային բանկում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի ավագ տնտեսագետը:

Պետության դատաիրավական ռազմավարությունը պետք է համապատասխանեցվի տվյալ երկրի իրողություններին և կարիքներին: Այնպիսի պետություններում, ինչպես Բելառուսը և Ուզբեկստանը, որտեղ կապիտալիզմը լավագույն դեպքում ձևավորման վաղ փուլում է, առաջնահերթությունը պետք է տրվի վեճերի անկողմնակալ կարգավորման հիմնական պահանջարկի ձևավորմանը՝ շուկայի շարունակական բարեփոխումների միջոցով: Մասնավոր հատվածի ընդլայնմանը զուգընթաց՝ կաճի նաև դատարանների նկատմամբ պահանջարկը: Դատավորները, օրենսդիրները և կառավարության պաշտոնյաները պետք է դրանից հետո աշխատեն՝ դատական համակարգի հաշվետվողականության և անկախության զարգացման ուղղությամբ՝ աստիճանաբար ուժեղացնելով դատական համակարգի կարողությունները:

Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում, ի թիվս այլ բարեփոխումների, շուկայական բարեփոխումները բավականին առաջ են անցել, սակայն դատաիրավական համակարգերը առայժմ չեն կայացել: Քաղաքականություն մշակողները և դատավորները այս պետություններում պետք է իրենց ուշադրությունը բևեռեն հաշվետվողականության ամրապնդման վրա և ներդրումներ կատարեն հիմնական կարողությունների՝ դատարանների շենքերի, պարզ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների և դատարանների քարտուղարների կամ կառավարիչների հաստիքների հատկացման հարցերի վրա, որպեսզի դատավորների աշխատանքն առավել արդյունավետ դառնա:

Բուլղարիայում, Մակեդոնիայում և Ռումինիայում դատաիրավական ծառայությունների համար մեծ պահանջարկ կա, այն դեպքում, երբ դատական կարողությունները սահմանափակ են: Այս պետությունները պետք է արձագանքեն անկախության, հաշվետվողականության, դատարանների կատարողականի, վեճերի կարգավորման այլընտրանքային մեխանիզմների և փաստաթղթերի, դատական կատարածությունների և նոտարների ինստիտուտի նախագծման և գործունեության բարդ խնդիրներին: Անհրաժեշտ է, որ նրանք արագ գործեն իրենց կողմից մշակված համապարփակ դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունների իրականացման հարցում:

Պետություններում, որտեղ ինչպես պահանջարկը, այնպես էլ կարողությունները համեմատաբար մեծ են, օրինակ՝ Եվրամիության նորանդամ պետությունները և Խորվատիան, կարող են իրենց ջանքերն ուղղել մնացած թերի խնդիրների լուծմանը՝ արագություն (Սլովակիայի Հանրապետությունում), որոշումների կիրարակման կարողություն (Լեհաստանում և Մերձբալթյան երկրներում) կամ անաչառություն և անկեղծություն (Հունգարիայում):

Հետագա դատաիրավական բարեփոխումների հիմքերը: Ի՞նչ է արվում

Դատական իշխանության բարեփոխումներ իրականացնելու ճանապարհին յուրաքանչյուր պետության առջև տարբեր հիմնախնդիրներ են ծառանում, սակայն զեկույցի համաձայն, այդ պետություններից բոլորին էլ անհրաժեշտ է՝

- ամրապնդել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը արժանիքների վրա հիմնված խթանների միջոցով, դատական գործերի պատահական հանձնարարման, որոշումների հրապարակման և դատարանների կատարողականի վերաբերյալ քաղաքացիների և մամուլի արձագանքի միջոցով: **Հայաստանն ու Վրաստանը, օրինակ, որպես թափանցիկության բարձրացմանն ուղղված քայլ, միջոցառումներ են ձեռնարկում իրավաբանական տեղեկատվության հոսքերը բարելավելու ուղղությամբ:**
- ապահովել գործունեության անկախությունը՝ դատական համակարգի կողմից բյուջեի, աշխատակիցների և ընթացակարգերի նկատմամբ հսկողության ուժեղացման միջոցով: **Մակեդոնիայում 2004թ. դատավորներին փոխանցվեցին իրենց բյուջեի նկատմամբ իրավասությունները:**
- փոփոխել դատական գործերի վարման ընթացակարգերը՝ դատարաններում դատական հսկողության և արդյունավետության բարելավման և դատավորներին տեղեկատվական տեխնոլոգիաներով ապահովելու համար: **Ալբանիան, Հայաստանը, Խորվաթիան և Մակեդոնիան այն պետությունների թվին են դասվում, որոնք ներդնում են նման համակարգեր:**
- բարելավել դատարանների հասանելիությունը, անվտանգությունը և գործունեությունը նոր կամ վերականգնված շենքերում կապիտալ ներդրումներ կատարելու միջոցով: **Վրաստանը, օրինակ, Ջարգացման միջազգային ընկերակցության (բանկի ցածր տոկոսադրույքով վարկերի հնարավորությունը) տրամադրած 13.4 մլն. դոլար վարկի միջոցներով վերակառուցում է իր դատարանների շենքերը:**

«Օրենքի իշխանությունը կայացած շուկայական տնտեսության համար էական է և անցումային պետություններից շատերում անհրաժեշտ է, որ ղեկավարները արդյունավետ, օպերատիվ և վստահելի դատաիրավական համակարգերի անհրաժեշտությունը դասեն իրենց զերակա առաջնահերթությունների թվին: Հուսով ենք, որ այս զեկույցի վերլուծությունը և դասերը կարող են օգնել հետագա աշխատանքը ուղղորդելու հարցում», եզրակացնում է տիկին Գրեյը: